ՀԵՂԻՆԷ

ՎԷՊ

Տ-ին Մ. ՄԱՐԻՍԵԱՆԻ

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

(Շարունակութիւն [1])

XX

Զը նայելով որ Ամիրանովը ամեն կերպ աշխատում էր գնոջ տխրութիւնները փարատել, բայց էլի Հեղինէի սրտից անտանելի թախիծը չէր հեռանում։ Տեսնելով թէ ինչպէս մարդը օրէցօր աւելի ուշագրութեամբ և քաղցրութեամբ է վերաբերում դէպի երեխան, Հեղինէն հեռվհետ համոզւում էր, որ անհրաժեշտ է հաշտուել ներկայ դրութեան հետ, բայց դեռ այդ նորա ուժիցը վեր էր։ Միակ մխիթարութիւնը, որ նա գտնում էր իւր մշտական հոգեկան կռուի մէջ անցնող կեանքում—այդ իւր երեխան էր։ Աշունքւայ երկար երեկոները անցկացնելով երեխայի օրօրոցի կողքին նստած, նա մտքով տեղափոխւում էր այն ապագայ ժամանակները, երբ իւր որդին կը կարողանար ընդունակ լինել վարձատրել նրան իւր սէրով այն զոհողութիւնների փոխարէն, որ նա արել էր նորա (երեխայի) համար։

---

[1] Տե՛ս «Մուրճ»- 1891 № 1, 2, 4, 5 7 և 9։

Այսպէս անցաւ մօտ ամիս ու կէս Սահառունու գնալու օրից։

Հեղինէին երբեմն թուում էր թէ Ամիրանովը փոխւել է դէպի լաւը։ Նա, կարծես, սկսել էր հաշտւել այն մտքի հետ, որ Նրանք կարող են ապրել մի յարկի տակ։

Նոյեմբեր ամսւայ օրերից մի օր, երբ Հեղինէն երեխայի սենեակումն էր, կամաց ներս մտաւ սենեակը Թամարը և, ըստ երևոյթին, ինչ որ մի բանից սաստիկ ուրախացած, նստեց նորա դէմուդէմը։

—Վճռել եմ, էլ չեմ կարող դիմանալ,—յանկարծ արտասանեց նա երկար լռութիւնից յետոյ։

Ես ուզում եմ հանգստացնել սիրտս։ Թող սպանեն, մորթեն ինձ, էլ ոչ ոքից չեմ վախենում։

Թամարի աչքերը այնպիսի անսովոր կրակով փայլեցին, նորա ձայնը այնպէս անսպասելի վճռականութեամբ հնչեց, որ Հեղինէի մէջ կասկած ծագեց, թէ արդեօք հօ չէ ցնորւել իւր տալը։

Թամարը այդ հասկացաւ և տարօրինակ կերպով ծիծաղեց։

—Թող, թող շուտով գնամ, քանի որ բարի հրեշտակ է այցելել ինձ։ Ով է իմանում, կարելի է, չար ոգին նորից ինձ իւր իշխանութեան տակ դցի։

Այդ ասելով Թամարը շտապով դուրս փախաւ սենեակից։

Հեղինէն վախեցած նայեց նրան, երեխային օրօրոցը դրեց ու դուրս վազեց նորա յետևից, բայց Թամարը արդէն անյայտացել էր։

Հեղինէն բոլորովին համոզւեց, որ նա ցնորւել է և շատ վախեցաւ։

Հետևեալ օրերը նա ուշադրութեամբ դիտում էր տալին և տեսնում էր, որ նորա բոլոր շարժւածքների մէջ երևում էր մինչև այն ժամանակ չը նկատւած համարձակութիւն։ Այդ Հեղինէին շատ էր զարմացնում, բայց որքան նա աշխատում էր իմանալ այդ անհասկանալի փոփոխութեան պատճառը, չէր կարողանում, Թամարը նրան ոչինչ չէր ասում։

Մի քանի օրից յետոյ Թամարին յանկարծ այնպիսի մի անտանելի տխրութիւն պաշարեց, որ նա էլ չը կարողացաւ դիմանալ և, վճռելով ամէն բան յայտնել Հեղինէին, վեր կացաւ ու գնաց նորա մօտ։

Հեղինէն ոչ ննջարանումն էր, ոչ էլ երեխայի սենեակում. նա նստած սեղանատանը թէյ էր ածում։ Ամիրանովը, Եփեմ.ան ու Աննա Դուրդէնեանը շրջապատել էին թէյի սեղանը։

Թամարը ասաց, որ իւր համար թէչ չ'ածի Հեղինէն, ընկաւ իւր ձեռագործի հետ և չը խառնուեց ընդհանուր խօսակցութեանը։

—Ինչու ես գոյնդ այդպէս գցել, հօ՞ հիւանդ չես,—մի քանի անգամ հարցրեց նրան Հեղինէն։

—Ոչինչ, առողջ եմ,—հազիւ շարժելով շրթունքները պատասխանում էր Թամարը։

Բայց նորա դէմքը հետզհետէ այնպիսի հիւանդոտ արտայայտութիւն էր ստանում, որ քիչ էր մնում որ Հեղինէն զօռով նրան ներս տանէր ու թեք գցէր անկողնի վրայ։

—Ասա, ինգրեմ, այդ ո՞ւմ համար ես գործում այդ շալը։

Թամարը բարձրացրեց հանդած աչքերը, մի րոպէի չափ նայեց հարսին, յետոյ նուազ ձայնով պատասխանեց՝

—Քեզ համար։

—Որ այդպէս է, կը նշանակի ես կատարեալ իրաւունք ունիմ այդ շալի վրայ և ինչ ուզեմ կ'անեմ,—ծիծաղեց Հեղինէն, աշխատելով տալի ձեռքից խլել ձեռագործը։

—Թող, խնդրեմ, ո՞ւմ է պէտք տալիս իմ ձեռագործը։

—Քեզ, Թամար։ Դիտես որ հալ չը կայ վրադ։ Դու պէտք է այժմ զբօսնես կամ պառկես և ոչ թէ նստած ձեռագործ անես։ Ես վաղուց է նկատում եմ, որ սրտումդ ինչ որ մի բան կայ, որ քեզ տանջում է և որ դու ժեղնից ծածկում ես։

—Հանգիստ թողէք դրան, Հեղինէ, դրան այդպէս մէկ-մէկ պատահում է, այնպէս տխրութիւն է գալիս վրան, որ կարծես աշխարհքը գլխին մթնել է,—ձեռքը թափ տալով ասաց Եփեմիան։

Ամիրանովը, որ կէս ժամի չափ երեխային իւր ծնկների վրայ նստացրած խաղացնում էր, հարևանցի ակնարկ դցեց փոքր քրոջ վերայ։

—Օյ, շատ սատանայ մարդ պէտք է դուրս գաս։ Տեսնում ես, Հեղինէ, ինչ սիրուն երեխայ է, բոլորովին քեզ է դցել,—ինքնագոհ կերպով արտասանեց Ամիրանովը։

—Իսկ ինձ թւում է, Միքայէլ, որ նա երկուսիդ էլ նման է, վրայ բերեց Եփեմիան։ Աչքերն ու քիթը իսկը քո աչքերն ու քիթն են, իսկ հնացած երեսարքն ու կաշուի քնքշութիւնը մորն են։

Այդ ժամանակ դրսից զանգահարեցին, իսկ մի քանի րոպէից

յետոյ Ծառան եկաւ յայտնելու, որ Պետրոսեանցը եկել է։ Պետրոսեանցը վաղուց է չէր եղել Ամիրանովների մօտ և այդ պատճառով Ամիրանովը մի քիչ զարմացաւ լսելով, որ այցելութեան եկողը նա է։

—Է՞, ի՞նչ ասացիր նրան։

—Ոչինչ։ Նրանք ասացին, որ եկել են աղջիկպարոնի յետևից և նրանց կը սպասեն դուռանը։

—Ես գիտէի, որ այդպէս կը լինի, բացականչեց Աննան։ Մեր աղախինը հիւանդացել է, իսկ խոհարարը, երևի, հարբած կը լինի։ Մօրաքոյրս առհասարակ վախենում է ինձ նրա հետ տեղ ուղարկել։

—Բայց այս անձրևով շատ էլ յարմար չի լինի կանգնել դըրսևում,—մտահոգութեամբ նկատեց Հեղինէն։ Խնդրիր, ներս գայ, դարձաւ նա Ծառային, կամ չէ, աւելի լաւ է ես ինքս գնամ կանչեմ։ Հեղինէն շտապով դուրս եկաւ սեղանատնից ու մի քիչ անցած յետ դարձաւ Պետրոսեանցի հետ։

—Բարև, Տիգրան Աւետիչ, շատ ուրախ եմ, որ տեսնում եմ ձեզ, քաղցրութեամբ ողջունեց նրան Աննան։ Երեք օր է, որ մեր տունը չէք եկել. ես ու մօրաքոյրս կարծում էինք թէ հիւանդացել էք։

—Փառք Աստծու, առողջ եմ։ Այսօր համարեա ամբողջ օրը ձեր տանն եմ եղել։

—Միթէ՞։ Ուրեմն դուք ընտրում էք այնպիսի օրեր, երբ ես տանը չեմ լինում, ծիծաղելով մատը թափ տուեց Պետրոսեանցի վրայ Գուրգէնեանը։ Լաւ, կը տեսնէք, այդ ձեզ էժան չի նստիլ։ Իսկ այդ ինչ է ձեր ձեռին, ուշադրութեամբ նայելով Պետրոսեանցի ձեռի ծրարին ասաց նա։ Հէնց իմանաս ինձ պէտք է հանի։

—Ես ձեզ մօտ էի, Աննա Արտեմիևնա, երբ որ բերեցին այս յայտարարութիւնը։ Ձեր մօրաքոյրը շատ խնդրեց, որ ես հասցնեմ ձեզ այս թուղթը։

—Տէք, տեսնենք այդ ինչ է։

Գուրգէնեանը վերցրեց ծրարը և անհամբերութեամբ բաց արեց։

Ծրարի մէջ գրած էր մի յայտարարութիւն, որով յայտնւում էր թէ Ուբարովը կտակ է թողել։

Այդ կտակով Ուբարովի ամբողջ կարողութիւնը բացի եօթ հազարից, որ պէտք է հանէր Թամարին, բաժանւում էր Աննա Գուր-

գէնեանի և հայոց թեմական դպրանոցի մէջ։ Կատակատար նշանակուած էր Պետրոսեանցը։ Գուրգէնեանին կանչում էին դատարան, որ նա այնտեղ պաշտօնապէս յայտներ, թէ ինքն է ժառանգը, և պահանջէր իրան հասնելիքը։

Գուրգէնեանը չէր հաւատում իւր աչքերին և շւարած նայում էր ամենքին։ Այդ դրութեան մէջ մի քանի րոպէ մնալուց յետոյ նա թուղթը յետ տուեց Պետրոսեանցին, ասելով՝—ոչինչ չեմ հասկանում։

Թամարը նստած տեղումը քիչ էր մնում ուշաթափուէր։

—Տէր Աստուած, այս ինչ արեցի,—հազիւ լսելի ձայնով շշընջաց նա։

—Վա՛յ,—համարեա սարսափած արտասանեց Պետրոսեանցը և հանդիսաւոր կերպով թուղթը դրեց սեղանի վրայ։

—Ախ, Աստուած իմ, ինչպէս վախացրեցիք ինձ,—բարկացած ասաց Եփեմիան ու երեսը խաչակնքեց։

Նա շարունակում էր հարցական կերպով նայել Պետրոսեանցի վրայ, իսկ Ամիրանովն ու Հեղինէն սկսեցին ուշադրութեամբ կարդալ յայտարարութիւնը։

Ամիրանովը, մի քանի տող որ կարդաց, այնպէս եղաւ, որ քիչ էր մնում երեխային վայր գցէր ձեռքից։ Հեղինէն բռնեց տղային և տալով դայեակին հրամայեց տանի իւր սենեակը։

Ամիրանովը կայծակահար եղածի նման քարացել, մնացել էր նստած տեղումը և դժոխային հայեացքով նայում էր քոյրերին։ Եփեմիան, որ դեռ գլխի չէր ընկել, թէ բանն ինչումն է, շւարած նայում էր եղբօրը։ Եղբայրը հասկացաւ, որ Եփեմիան բանից տեղեակ չէ, և մտքումը վճռեց, որ մեղաւորը Թամարն է, ու այնպէս կատաղի հայեացք գցեց Նրա վրայ, որ խեղճը սպրտնեց ու դողդողաց և, չը կարողանալով տանել եղբօր չարագուշակ հայեացքը, վեր կացաւ տեղից ու փախաւ սենեակիցը, թէև հազիւ էր կարողանում կոնգնել ոտքի վրայ։

Մի քանի րոպէ անցած Ամիրանովը ուշքի եկաւ և հասկացաւ, որ անհրաժեշտ էր վկաների ներկայութեամբ սառնասիրտ պահել իրան, բայց տեսնելով, որ ինքն իրան չի կարողանում զսպել, վեր կացաւ գնաց իւր առանձնասենեակը։

Եփեմիան մեքենայաբար հետևեց եղբօրը։ Թամարը միւս դրոնոմն էր դուրս գնացել։

—Թամար, ինչ-որ մի վատ բան կայ այս բանի մէջ, դու բոլորը գիտես, ասա, խնդրեմ, շուտ արա, թէ չէ ես կը գժւեմ,—հանելով տալի յետևից հարց ու փորձ էր անում Հեղինէն։

—Ախ, սարսափում եմ։ Յետոյ կ'իմանաս, ամեն բան կ'իմանաս, այժմ չեմ կարող...

—Թաքցնելդ աւելորդ է,—Հեռքը Թամարի ուսին դնելով հազիւ լսելի ձայնով արտասանեց մեռելի պէս սպրտնած Հեղինէն։

Ես գլխի եմ ընկնում թէ ինչումն է բանը։ Կոակը գողացել են Եփեմիան կամ Միքայէլը. իսկ դու, խեղճ զոհ, գործիք ես դարձել նրանց ձեռքում այդ դժոխային գործը կատարելու համար։

Թամարը գլխով արեց և օձից խայթուածի նման փախաւ գնաց ամենահեռաւոր սենեակը։

Այժմ հասկանում եմ, թէ ինչի մասին էին նրանց այն գաղտնի և անվերջ խորհրդակցութիւնները, մտածեց Հեղինէն։

—Վա՛յ ինձ, վա՛յ ինձ, էլ ինչ անբախտութիւն է մնացել, որ գլխովս անցած չը լինի։ Տէր Աստուած, ինչո՞վ եմ արժանացել ես այսպիսի պատժի,—աղէկտուր ձայնով բացականչեց նա և համարեա ուշաթափ ընկաւ բազմոցի վրայ։

Գուրգէնեանը մնացել էր սեղանատանը։ Ակամայ հանդիսատես դառնալով այն լուռ տեսարանին, որ մի քանի րոպէ առաջ կատարուել էր այնտեղ, նա մութը կերպով զգում էր, որ այդ բանումը ինչ որ մի ընտանեկան գաղտնիք կայ։ Նա իւր ներկայութիւնը այդ դէպքից յետոյ վերին աստիճանի անյարմար էր համարում և մի առիթ էր փնտռում որ, որքան կարելի է, շուտով այնտեղից հեռանար։

—Գնանք տուն. ինչ պէտք է անենք այստեղ, Աննա Արտեմիեւնա,—առաջարկեց Պետրոսեանցը։

—Գնանք, բայց չը գիտեմ, թէ որտեղ է վերարկուս ու գլխարկս. կարծեմ, դահլիճումը պէտք է լինի։ Ինչ էք կարծում, կարելի՞ է մտնել, վերցնել, շարած հարցնում էր Գուրգէնեանը, որի ապշութիւնը դեռ չէր անցել։

—Ի հարկէ։ Մտնենք միասին։

Մտնելով դահլիճը նրանք բացականչեցին և վախեցած յառե-

ցին աչքերը Հեղինէի վրայ.—Գէմքը մեռելի գոյն էր ստացել, աչքերը վեր էին քաշել, շրթունքները կապտել էին և ամբողջ կերպարանքը այնպիսի մեռելային արտայայտութիւն ունէր, որ Աննան կարծեց թէ նա մեռել էր։

—Մի վախենաք, Աննա Արտեմիևնա, ուշաթափուել է, հանգըստացրեց նրան Պետրոսեանցը։ Դուք կոճակները բաց արէք, ես գնամ ջուր բերեմ։

Մի քանի րոպէից յետոյ Հեղինէն ուշքի եկաւ։

—Աննա ջան, հոգիս, ուրեմն քո դէմ էին ուղղած նրանց մեքենայութիւնները, դուրս թռաւ Հեղինէի բերնից։

Հեղինէն ջղաձգաբար բռնեց Գուրգէնեանի գլուխը և բաց չէր թողնում ձեռիցը։

—Խաչը, չե՞մ հասկանում, թէ ես ինչու պէտք է Ուբարովի ժառանգը լինեմ,—շշնջաց Աննան։

—Այժմ ձեզ պէտք է ասել, թէ ինչումն է բանը, Աննա Արտեմիևնա, որովհետև միևնոյնն է, եթէ ես չ'ասեմ, դուք ուրիշ տեղից կ'իմանաք,—շփոթուած արտասանեց Պետրոսեանցը։

—Ի՞նչ կայ, ասացէք,—վախեցած արտասանեց Աննան։

—Ես վերջին օրերս լսեցի, ասաց Հեղինէն, դանազան ակնարկութիւններ քո և Ուբարովի մէջ եղած ազգականութեան մասին. այժմ, ինչպէս տեսնում եմ, այդ զրոյցները հաստատուում են։

—Այո, տիկին Հեղինէ, խեղճ Ուբարովը օրիորդի հայրն էր,—դժուարութեամբ արտասանեց Պետրոսեանցը ու, իսկոյն հանելով գրպանիցը մի նուրբ նկարած պատկեր, շարունակեց,—իսկ այս հիանալի կինը ձեր մայրն է, օրիորդ։

—Աստուած իմ, ինչ եմ լսում, շւարած բացականչեց Գուրգենեանը և նորա աչքերը շաղուեցին։

Իսկ ով էին նրանք, որոնց ես իմ ծնողներս էի համարում։

—Ձեր բարերարները։ Հանգստացէք, օրիորդ, ես ձեզ մի օր կը պատմեմ ձեր պատմութիւնը։

—Վայ ինձ, թշուառիս,—գլուխը բռնելով բացականչեց Գուրգէնեանը, կարծես սթափուելով խորը քնից յետոյ։ Ինչ քարասիրտ մարդ էք, պ. Պետրոսեանց։ Ինչու ինձ ոչինչ չէիք ասում նորա կենդանութեան ժամանակ։ Նա տանջուում էր հոգով ու մարմնով,

նա միայնակ էր, իսկ դուք ինձ ոչինչ չէիք յայտնում, որ գոնէ նորա մեռնելու րոպէին ես իմ ձեռքով աչքերը փակէի։ Այժմ ես հասկանում եմ այն տարօրինակ խօսքերը, որ նա ասում էր ինձ հանդիպելիս. իսկ ես, թշուառականս, նրան խելացնոր էի կարծում։

Պետրոսեանցը այնքան յուզած էր, որ ոչինչ չը կարողացաւ ասել օրիորդին մխիթարելու համար։

Հեղինէն յենուել էր պատին ու համարեա չէր լսում Գուրգէնեանի խօսքերը։

Երևում էր, որ ինչ որ մի նոր միտք էր ծագում նորա գլխումը. նա այլ ևս չէր զգում առաջուայ թոյլութիւնը։

— Աննա, Աննա, յանկարծ բացականչեց նա, շուտ արա, գնա տուն, հեռացիր այստեղից. քեզպէս մաքուր մարդիկ այս տանը չը պէտք է մնան։

Պետրոսեանցը խորին ցաւակցութեամբ նայեց նրանց վրայ։ Մի քիչ յետոյ նա Գուրգէնեանին տարաւ տուն։

Աննան չը հանգստացաւ մինչև որ պատմել տուեց Պետրոսեանցին իւր անցեալը։

Պետրոսեանցը աշխատում էր ծածկել Աննայից նորա անցեալից այն ամենը, որ կարող էր շատ վշտացնել նրան։

Խանդաղատանքի, երախտագիտութեան և վշտի արտասուքներ երևացին օրիորդի աչքերում։

Նա ամբողջ գիշերը չը կարողացաւ աչքերը փակել. շատ և իրարից տարբեր զգացմունքներ յուզում և ալէկոծում էին նորա հոգին։

Հեղինէն մենակ մնալով մի ժամի չափ մնաց գալիս գահլիճում խորին մտախոհութեան մէջ։

Ինչ որ լուրջ միտքեր յուզում էին նրան և վճռական արտայայտութիւն էին տալիս նորա դէմքին։

Երեկոյեան ժամի ութին մօտ էր։

Ամիրանովը դուրս եկաւ տանից։

Նփեմիան եղբոր հետ երկար խօսելուց յետոյ գնաց փնտռելու քրոջը։

—Ախ, անզգամ, այս քո՛ բաներն են։ Ինչպէս համարձակուեցիր ձեռք տալ այն թղթերին. չէի՞ր իմանում թէ ինչ դժուարութիւններով էի կարողացել ես ձեռք գցել այդ թղթերը։ Կաց, գեռ Միքայէլը ինչ կը բերի գլխիդ, նզովեալ արարած,—ասում էր Եփեմիան փրփուրը բերնին, երբ որ Հեղինէն աննկատելի կերպով մտաւ նեքսև։

Թամարը, կանգնած տեղը, տենդով հիւանդի նման դողում էր։

—Մեղք եկէք խեղճին, առանց այն էլ դուք ու ձեր եղբայրը դրան շատ էք տանջել, խորովել, արհամարհաբար ասաց Հեղինէն կանգնելով երկու քոյրերի մէջ տեղը։

Եփեմիան սաստիկ կարմրեց ու հեռացաւ։

Հեղինէն Թամարին զոռով թեք գցեց իւր անկողնի վրայ ու ինքը դուրս եկաւ պատշգամբը։

Վճռական րոպէներ էին Հեղինէի համար։ Նա գործ էր դնում իւր կամքի ամբողջ ոյժը հարցը հաստատ վճռելու համար։ Վերջապէս, մօտ երկու ժամ անցնելուց յետոյ, նա վերադարձաւ իւր սենեակը անդրդուելի դիտաւորութեամբ՝ իրագործելու իւր մտքումը որոշած ծրագիրը։

Թամարը դեռ չէր քնել։

—Հը՞, ինչպէս ես զգում քեզ։

—Առաջուանից լաւ եմ, բայց չեմ հանգստանալ մինչև որ համաձայնես ինձ լսել։

Այս ասելիս Թամարը այնպիսի թախանձալից հայեացք գցեց հարսի վրայ, որ նա չէր կարող չը կատարել նորա խնդիրքը։

—Ես այժմ քեզ շատ զգուելի մարդ եմ երևում, չէ՞։ Բայց լսիր, Հեղինէ, իմ անցեալը և տես թէ արդեօք մի որ և իցէ ինձ արդարացնող բան չես գտնիլ անցեալումս։

Հեղինէն նստեց անկողնի վրայ և քաջալերելով ասաց՝

—Ես լաւ գիտեմ, Թամար, որ Աստուած քեզ բարի սիրտ ու մաքուր զգացմունքներ է տուել և որ, դժբախտաբար, հէնց մանկութիւնից դու շրջապատուած ես եղել անսիրտ ու ստոր մարդիկներով։ Եղբայրդ ու քոյրդ, օգուտ քաղելով քո անճար դրութիւնից, քեզ իրանց ազդեցութեան տակն են գցել, որ շատ հեշտ է եղել,—դու խեղճ ու միամիտ, նրանք սատանայի պէս խորամանկ։

—Դու գուցէ կարծում ես, Հեղինէ, թէ ես այնքան փչացած

եմ, որ չէի նկատում ինձ շրջապատող կեղտը։ Զէ, ես շատ լաւ տեսնում ու հասկանում էի, բայց մնում էի այդ կեղտի մէջ, որովհետև ելք չը կար, որովհետև անճար էի։

Մի րոպէ Թամարը լուռ կացաւ, յետոյ, ձեռները խաչելով, հոգոց քաշեց ու գլուխը կռացնելով կրծքի վրայ, շարունակեց.

— Ինձ համոզեցին, ինձ հաւատացրին, թէ անհրաժեշտ է հաշուեւել Ուբարովի հետ։ Ես շատ ուրախ էի այդ բանին, որովհետև նրան մի քիչ սիրում էի։ Սկզբում ես չէի իմանում եղբօրս ու քրոջս գաղտնի նպատակը։ Յետոյ քիչ քիչ սկսեցի գլխի ընկնել։ Երբ որ նրանք այդ նկատեցին, ամէն բան յայտնեցին ինձ, տեսնելով որ էլ ծածկելն աւելորդ է։ Նրանք ինձ էլ գրաւեցին իրանց կողմը։ Խոստումներ էին անում ինձ, նկարագրում էին իմ ապագայ բախտաւորութիւնը այն դէպքում, եթէ մեզ յաջողէր ժառանգութիւնը մեր ձեռքը գցել։ Էլ ինչ ասեմ, մի խօսքով նրանք մի քանի օրւայ մէջ ինձ ափսոնեցին ու իրանց ձեռքին գործիք շինեցին։

Մեզ չը յաջողուեց հաշուեւել քեռուս հետ։ Շատ չ՝անցած մի նոր վտանգ էլ ծագեց մեզ համար Աննա Գուրգէնեանի կողմից։ Միքայէլն ու Եփեմիան չը յուսահատեցին և սկսեցին ամէն միջոց գործ դնել որ քեռիս կտակ չը կազմէր։ Այն ժամանակ ես սարսափ զգացի։ Բայց գրաւեւելով նրանց խոստումներից ու փաղաքշանքներից և վախենալով նրանց բարկութիւնից, ես չը հակառակեցի նրանց ու շարունակեցի օգնել, թէև մի ներքին ձայն անդադար ինձ ասում էր, որ ես գզուելի բան եմ անում։ Ես շատ անգամ մտածմունքների մէջ էի ընկնում ու ինքս ինձ հարցնում էի՝ ինչի՞ցն է, որ մարդուս մէջ այդպիսի երկուութիւն կայ։

Ախ, Հեղինէ ջան, եթէ ես այն ժամանակ քեզ այնպէս մօտ լինէի ինչպէս այժմ, ես այս աստիճան չէի ընկնիլ բարոյապէս։ Լինում էին րոպէներ, երբ ես զգում էի, որ դու մեր ամէնքիցս անհամեմատ բարձր ես կանգնած, բայց ես ամաչում եմ ասել, այդ միտքը իմ մէջ միայն նախանձ ու ատելութիւն էր զարթեցնում դէպի քեզ։ Քո բարութիւնն ու քաղցր վարմունքը կամաց—կամաց խեղդեցին իմ մէջ այդ զգացմունքները։

Է՛հ, յուսահատ կերպով թափ աւեց ձեռքը Թամարը և երեսը դարձրեց բարձին։

Ինչի վրայ էի խօսում, երկար լռութիւնից յետոյ նորից սկսեց նա և. ձեռքը դրեց քունքին։

Հա՛, կոակի մասին էր։ Կոակը, չը նայելով մեր ջանքերին, կազմեց։ Է, ամեն բան վերջացաւ, մտածեցի ես, թէև, ճիշտն ասած, չէի իմանում ուրախանամ՝ թէ տխրեմ որ մեր ուզածը չի յաջողել։ Այնքանն եմ միայն յիշում, որ այդ օրից սիրուս հանգստացաւ, կարծես վրայիցը մի ահագին քար վայր ընկաւ, բայց, ափսոս... երկար չը տևեց իմ անդորրութիւնս։

Կարծես մի տենդային դող սառուեցրեց Թամարի ամբողջ մարմինը։ Վերջապէս նա իրան յաղթեց ու վերին աստիճանի յուզած ձայնով շարունակեց.

Միքայէլն ու Եփեմիան դրա դէմ էլ ճար դտան։ Նրանք վճռեցին գողանալ կոակը։ Ես զզւանք զգացի դէպի եղբայրս ու քոյրս և հրաժարուեցի այդ գարշելի գործին մասնակցելուց։ Թոյլ չը տալ, որ նրանք իրագործեն իրանց մտադրութիւնը, ես չէի կարող, այդ իմ ուժիցը վեր էր։ Նրանք երդում առան ինձնից, որ ոչ ոքի բան չ՝ասեմ և, չը գիտեմ ինչ հնարքով, բերնիցս խօսք քաշեցին, իմացան, թէ որտեղ էր պահուած կոակը։ Ուրբաթի մեռնելու օրը Եփեմիան իմ աչքի առաջին գողացաւ կոակը։ Եւ այդպիսով, ես այն օրից դարձայ ակամայ գործակից նրանց յանցանքի։

Դու այն ժամանակ ջրերն էիր գնացել, խորը հոգոց քաշելով շարունակեց Թամարը։ Ես ինքս ինձնից սկսեցի զզուել. խիղճս ինձ հանգիստ չէր տալիս. ախ, թէ իմանայիր, ինչեր քաշեցի ես այն ժամանակ։ Ինձ թւում է, որ ես կը գժուէի, եթէ կոակի տեղ մի ուրիշ թուղթ չը դնէի, որ նոյն գիշերը Եփեմիան հանգիստաւոր կերպով այրեց։ Խորամանկութիւնս չը բացուեց, որովհետև Եփեմիան, ռուսերէն չ՝իմանալով, այն թուղթը կոակի տեղ ընդունեց։ Այդպիսով կոակը մնաց իմ ձեռքին, բայց այնքան համարձակութիւն չունէի որ յայտնէի թէ կոակ կայ և իմ ձեռքին է։

Այն օրանից, որ Միքայէլը ժառանգութեան իրաւունքները ստացաւ, ես գիշեր-ցերեկ հանգիստ չունէի։ Միակ մխիթարութիւնս այն էր, որ միտքս դրել էի շուտով բանալ այդ ինձ ճնշող գաղտնիքը։ Ամեն անգամ, որ քեզ հետ տեսնուում—խօսում էի, այդ տրամադրութիւնս աւելի էր հաստատուում։ Քանի քանի անգամ ես ու-

գեցել եմ քեզ ցոյց տալ կոտակը, բայց վախենում էի։ Այդ անվճռականութիւնս ինձ աւելի ստելի էր դարձնում իմ աչքումս. Վերջապէս, ինչ երկարացնեմ, էլ չը կարողացայ դիմանալ այդ բարոյական տանջանքներին ու սրանից երեք օր առաջ ծածուկ տարայ կոտակը դրեցի այն սենեակը, որտեղ մեռել էր Ուբարովը և որտեղ մինչև այժմ էլ ապրում է Նորա այն կիսակոյր պառաւ աղգական կինը, որ նրան պահում էր հիւանդ ժամանակը։

Պառաւին ասացի, որ այդ թուղթը տանի ներկայացնի դատաւորին. նա էլ արեց։

—Ճիշտ եմ, ես էլ նկատում էի, որ դու քեզ մի տխսակ էիր զգում, բայց չէի հասկանում թէ ինչ կայ։

—Հա, Հեղինէ, քեզ այն ժամանակ թւում էր, թէ ես ցնորւել եմ. և, ճիշտ ասած, ես ինքս զարմանում եմ, թէ ինչպէս է եղել, որ խելքս չեմ կորցրել։

Է, ինչ ասեմ. զգում եմ, որ դու այս բոլորը իմանալուց յետոյ ինձ պէտք է ատես։

—Զուր ես այդպէս կարծում, Թամար։ Ով որ տեսել է, թէ ինչպէս էիր դու տանջում այս քանի շաբաթը, չի կարող չը խղճալ քո վրայ և չը սիրել քեզ անկեղծ սիրով։

—Բայց ինչու ես այդպէս եղել, Հեղինէ. ինչու ես այդպէս գոյնդ գցել։ Ներիր, որ ես քեզ վշտացրեցի իմ պատմածովը։

—Մի վախենար. ես այնքան կամքի ոյժ ունեմ, որ կարող եմ դառնութեան բաժակը մինչև վերջին կաթիլը խմել։ Էգուցանից ես իմ անցեալիս հետ ունեցած բոլոր կապերը կը կտրեմ, կ՚ոչնչացնեմ։ Աւելի լաւ է իմ որդին հայր չ՚ունենայ քան թէ մի օր իմանայ, որ իւր հայրը գող ու աւազակ է, աւելի լաւ է ես ու նա մեռնենք քան մնանք այստեղ ու ծծենք այս վարակուած օդը։

Թամարը լաւ չէր հասկանում Հեղինէի ասածի միտքը, բայց նա այնպիսի ձայնով արտասանեց այդ խօսքերը, որ տալը ամբողջ մարմնով սառստեց ու ցնցուեց։

Հեղինէն մի բոպէի չափ նայեց Նորա վրայ, յետոյ վեր կացաւ ու զարթեցրեց պառաւ դայեակին։ Դայեակը լսեց Նորա պատուէրը ու դուրս գնայ։ Մի քիչ անցած ներս բերեցին երկու չեմոդան։ Հեղինէն շտապով դարսեց իւր բաները, հրամայեց դայեակին, որ

հաւաքի երեխայի ոպիտակեղէնն ու տեղաւորի, և ինքն նորից մի տոմսակ գրեց Աստնուն, որով խնդրում էր նրան կառք վարձել իւր համար։

Նամակն այսպէս էր վերջանում։

«Վաղը առաւօտ ժամի տասնը մէկին կը սպասէք ինձ պոստի կայարանում։ Գնում եմ Պետերբուրգ քեռուս մօտ։ Այս պէտք է առայժմ գաղտնի մնայ ամենքից։ Պատճառը մի սարսափելի բան է։ Գուցէ մի ժամանակ դուք իմանաք...

Էլ ոչինչ չը հարցնէք ինձանից։

Հեղինէ Ամիրանեան։

Երբոր Հեղինէն ուղարկեց նամակը և հարցրեց իմացաւ, որ մարդը դեռ տուն չի եկել, շարունակեց ճանապարհի պատրաստութիւնները։ Նա այնպէս շտապելով էր անում այդ, այնպէս ուշադրութեամբ էր մի բանից միւսն անցնում, կարծես վախենում էր չը լինի թէ յանկարծ մէկը իրան համոզի հրաժարուել այդ վճռական քայլն անելուց։

Թամարը շարած ու վախեցած նայում էր հարսին։

—Հեղինէ, երևում է՝ պատրաստում ես ճանապարհ ընկնել. չը գիտեմ ո՞ւր ես գնում, բայց միևնոյնն է, խնդրեմ, ինձ էլ տար հետդ։ Դու որ չը լինէիր՝ ես բոլորովին կը թաղուէի բարոյական կեղտի մէջ. դու աչքերս բաց արեցիր, դու իմ մէջ զարթեցրիր ձգտումն դէպի լաւը, մի խօսքով դու ինձ կեանք տուեցիր, քեզնով ես յարութիւն առայ իմ բարոյական մեռելութիւնից։ Թէ Աստուած կը սիրես, այժմ ինձ բարոյական վերածնութեան կիսաճանապարհին մենակ մի թողնիլ։

Հեղինէն գրկեց Թամարին և խոստացաւ նրան հետը տանել։

XXI

Ամիրանովը մնացել էր շարած, թէ ինչպէս է գտնուել կոտակը, քանի որ Եփեմիան նրան հաւատացրել էր թէ ինքն իւր ձեռքով ոչնչացրել էր այդ թուղթը։ Բայց այսպէս թէ այնպէս կոտակը գտնուել էր։ Այդ միտքը ամբողջ գիշերը տանջում էր նրան. մի կողմից նրան սարսափ էր ազդում այն, որ նա պէտք է զրկուէր Ուբա-

բովի թողած ժառանգութիւնից, միւս կողմից նա վախենում էր, որ թամարը գաղտնիքը յայտնի և Հեղինէն, իմանալով ամեն բան, աւելի ևս սառչի իրանից, մինչդեռ, ինչպէս իրան թւում էր, շատ քիչ էր մնում որ նա բոլորովին հաշտուէր իւր հետ։

Առաւօտեան Ամիրանովը գնաց դատարան առանց տեսնելու Հեղինէի հետ։ Նա անհամբերութիւնից տանջւում էր, թէ երբ պէտք է տեսնի կոտակը, որի մէջ նա յոյս ունէր գտնել մի քանի ձեւական գանցառութիւններ, որոնք հնարաւորութիւն կը տային իրան վէճ բարձրացնել ժառանգութեան մասին։

—Հը՛մ, ուրախ-ուրախ բացականչեց նա կարդալով կոտակը. թէև վկաներով վաւերացրած է, բայց չի ներկայացրած ուր հարկն է և այդ պատճառով օրինական նշանակութիւն չունի։

Դատարանից դուրս գալով՝ Ամիրանովը սկսեց սառը մտածել և հասկացաւ, որ հարցը այնքան պարզ չէր, որքան իրան թւում էր։ Որքան մտածում էր, չէր կարողանում մի հնարք գտնել, որ թէ հարստութիւնը մնար իրան և թէ անունը չ՝արատաւորուէր։ Նատ զօռ տուեց գլխին այդ անտանելի դրութիւնից դուրս գալու համար, վերջապէս վճռեց գնալ Պետրոսեանցի մօտ ու աշխատել մի կերպ համաձայնութիւն կայացնել նորա հետ։

Այո, պէտքէ աշխատեմ հէնց այսօր վերջացնել այս գործը։ Վերջացնելուց յետոյ կ՝երթամ տուն կնոջս հետ կը խօսեմ, մի կերպ կը բացատրեմ։ Երէկ նրան ես թողեցի սաստիկ շւարած դրութեան մէջ,—ասաց նա ինքն իրան։

Մի քանի ժամ յետոյ Պետրոսեանցը կատաղութիւնից խեղդւելով մտաւ Գուրգէնեանի սենեակը։ Օրիորդը դաս էր տալիս երեխաներին։

—Տիգրան Աւետիչ, ինչ է պատահել ձեզ, վախեցած հարցրեց օրիորդը։

—Երևակայեցէք, Աննա Արտեմիևնա, Ամիրանովը այնտեղ է հասցրել իւր անամօթութիւնը, որ համարձակւում է դատարանում վէճ բարձրացնել ժառանգութեան մասին։ Թող մէկ էլ մի ծպտուն հանի՝ տեսնի ինչ կը բերեմ գլուխը. բոլոր խարդախութիւնները հրապարակ կը հանեմ։ Մի ժամից յետոյ ինձ վերջնական պատասխան պէտք է տայ։

—Տիգրան Աւետիչ, խնդրում եմ, աղաչում եմ, թողէք այդ գործը։ Խղճացէք գոնէ Հեղինէին. առանց այդ էլ նա անբախտ է։

—Ապահով կացէք, նա ինձնից էլ լաւ է ճանաչում իւր մարդուն և վաղուց ատում է նրան։

Ինչ լաւ կը լինէր, որ կանայք չը խառնուէին այն գործերին, որ չեն հասկանում։ Ձեր բանը ընտանիքն ու տնտեսութիւնն է, ինչ ուզում էք արէք այդ ասպարէզում, իսկ միւս բաներում մեզ, տղամարդիկներիս, թողէք. ինչ որ պէտք է ձեզ համար՝ մենք կ'անենք։

Աննան սկսեց տաք-տաք վիճել, պաշտպանել կանանց իրաւունքները, բայց Պետրոսեանցը անհամբերութեամբ կտրեց նորա խօսքը։

Նորա համար չեմ եկել ձեզ մօտ, օրիորդ, որ դատողութիւններ տամ կանանց հարցի մասին...

—Բայց հօ չէք կարող հերքել, որ ես իրաւունք ունիմ հրաժարուել այն բանից, որ ինձ տալիս են, ընդհատեց նորա խօսքը օրիորդը սաստիկ յուզուած։

Ես ձեզ ասում եմ, Տիգրան Աւետիչ, որ ես ամէն բանից ձեռք եմ քաշում, միայն թէ կարողանամ փրկել Հեղինէի պատիւը։ Մոռանալ թէ ինչ է եղել ինձ համար Հեղինէն — ստորութիւն կը լինէր իմ կողմից, շարունակեց նա յուզմունքից կարմրատակած երեսով։

— Այ, այդպէս են միշտ դատում կանայք։ Ես մէկել կրկնում եմ, որ դուք այս գործից ոչինչ չէք հասկանում և այդ պատճառով չը պէտք է խառնուէք սրան. այս ձեր բանը չէ, մռայլ դէմքով պատասխանեց Պետրոսեանցը։

Յիշեցէք, որ հարցը միայն ձեր մասին չէ, այլ և մի հասարակական հիմնարկութեան—ուսումնարանի մասին։ Լաւ իմացէք, Աննա Արտեմիևնա, որ այն դէպքերում, երբ մասնաւոր անհատների շահերը դէմ են ընդհանուրի շահերին, մարդուս սրբազան պարտականութիւնն է զոհել անհատների շահերը, եթէ մինչև անգամ իւր ամենասիրելի բարեկամներն էլ լինեն այդ անհատները, և պաշտպանել հասարակութեան շահերը։ Այդպիսի դէպքերում ազնիւ մարդը պէտք է մոռանայ թէ իրան և թէ ուրիշներին և պէտք է միայն մի բան աչքի առաջ ունենայ—արդարութիւնը, մի քիչ աւելի մեղմութեամբ աւելցրեց նա, նայեց ժամացոյցին ու գնաց։

Աննան տխուր-տխուր նայեց նորա յետևից։

Նա ուզեց շարունակել դասը, բայց չը կարողացաւ ու թողեց գնաց իւր սենեակը։ Այնտեղ նա երկար ժամանակ մնաց խորը մտահոգութեան մէջ։ Նա մտածում էր Հեղինէի մասին ու աշխատում մի հնարք գտնել գործը այնպէս վերջացնելու, որ Հեղինէն չը վշտանար։ Նորա սիրտը կսկծում էր, երբ որ նա մտածում էր, որ ինքը, թէև ակամայ, պատճառ պէտք է դառնայ Ամիրանոմների ընտանիքի անբաղդութեան։

Նա սկսեց յիշել իւր անցեալը բոլոր ամենաանշան մանրամասնութիւններով, յետոյ մտքով վերացաւ՝ տեղափոխուեց Թոմաևի մօտ և Նորա աչքերը արտասուակալեցին։

Ինչիցն է, որ իմ անուան հետ կապուած են անախորժութիւններ իմ մի քանի մտերիմ մարդկանց համար, գառնութեամբ մտածեց նա։

Միթէ ինձ վիճակուած է միայն ցաւ պատճառել իմ բարեկամներին։ Ախ, Աստուած, ինչ տարօրինակ կեանք է եղել իմ կեանքս։

Այդ մտածմունքները շատ տանջեցին բարեհոգի և քաղցրաբարոյ օրիորդին, որ ամեն կերպ աշխատում էր հաշտ ու սէրով ապրել ամենքի հետ։

Պետրոսեանցը օրիորդ, Գուրգէնեանի մօտից դուրս գալուն պէս, պատահեց իւր մի քանի ընկերներին։

—Գիտէք, պարոններ, հանդիսաւոր կերպով յայտնեց նա նրանց, Ուբարովը թեմական դպրանոցի օգտին ութսուն հազար րուբլի է կտակել։ Մի այդպիսի նուիրատուութիւն էլ որ լինի՝ մեր դպրանոցը կը կարողանայ այնպէս գնալ, որ համալսարան մտնելու արժանի պատանիներ կը պատրաստի։ Ութսուն հազարը մեծ փող է։

Ափսոս Սահաուունին այստեղ չէ. շատ կ'ուրախանար։ Հէնց այսօր կը գրեմ նրան, թող հոդին փառաւորի։

Այդ ասելիս Պետրոսեանցը կանգնած տեղումը թռչկոտում էր։ Նորա դէմքը, ձեռները, ոտները և ամբողջ իրանը այնպէս սաստիկ շարժւում էին, որ դժւար էր առանց ծիծաղի նայել նորա վերայ։

—Ախ, Պետրոս, Պետրոս, շատ կտրիճն ես եղել, ասաց ընկերներից մէկը մտերմաբար խփելով նորա ուսին, իսկ միւսները սկսեցին

զանազան հարցեր թափել նորա գլխին, որոնց նա հազիւ էր ժամանակ գտնում պատասխան տալու։

—Բայց, պարոններ, ես խօսքով ընկայ։ Ժամադիր եմ եղել Ամիրանովի հետ մի շատ կարևոր գործի վերաբերմամբ, մոահոգ դէմքով արտասանեց Պետրոսեանցը և համարեա վազէ վազ անցաւ փողոցի միւս կողմը։

Մինչդեռ ընկերները շարունակում էին տաք-տաք խօսել նոր լսած լուրի մասին, Պետրոսեանցն ու Ամիրանովը շատ թունդ բացատրութիւն էին տալիս միմեանց։ Միխայիլ Պետրովիչը սաստիկ վախեցաւ Պետրոսեանցի սպառնալիքներից։

Երեկոյեան ժամի հինգին մօտ կը լինէր, երբ որ Ամիրանովը յոգնած ու վրդովւած վերադարձաւ տուն։ Նա համարեա ուրախացաւ, որ կնոջը տանը չը գտաւ։

—Երեխան ո՞ւր է, մի քիչ յետոյ հարցրեց նա աղախնից։

—Չը գիտեմ, աչքերի խորամանկ արտայայտութեամբ պատասխանեց աղախինը։

Նա ու Ծառան իրար երեսի նայեցին։

Ամիրանովը մեքենայաբար քայլերն ուղղեց դէպի երեխայի սենեակը։ Մտնելով նա զարմացաւ այնտեղ տիրող անկարգութեան վերայ։ Պահարանն ու կոմոդը բաց էին. նայեց մէջները,—դատարկ էին. յետոյ վազեց դէպի օրօրոցը,—տեղաշոր չը կար մէջը։

Ամիրանովի սիրտը վկայեց, որ մի սարսափելի բան է պատահել։ Նա այլ ևս չը կարողացաւ դիմանալ ու նորից սկսեց հարց ու փորձ անել Ծառաներին։ Կատաղած նրանց ծաղրից ու կիսատ-պռատ պատասխաններից, նա սեղանի վրայից վերցրեց ճրագն ու վազեց իւր առանձնասենեակը։

Առաջին բանը, որ նորա աչքին ընկաւ, նորա հասցէով գրած մի նամակ էր։ Նա իսկոյն ճանաչեց Հեղինէի ձեռքը և անհամբերութեամբ պատռեց ծրարը։

Նամակը մի քանի տողից էր բաղկացած։ Ահա բովանդակութիւնը։

«Ես անջատւում եմ ձեզանից ընդ միշտ։ Գնում եմ Պետերբուրգ։ Դուք լաւ գիտէք, թէ ինչ է ինձ սոսկում... իմացած եղէք, որ վճիռս անդրդուելի է։ Թամարը գալիս է ինձ հետ. վախենում է, որ հալածէք իրան։ Հ։

Ամիրանովը ապշած մի քանի անգամ կարդաց այդ սարսափելի տողերը, կարծես չը հաւատալով իւր աչքերին։ Մի կողմից՝ կնոջ փախո՛ւստը, միւս կողմից՝ կոակի առիթով ծագած անախորժութիւնն ե՛րը.—նա գլուխը կորցրել էր և չէր իմանում թէ ինչի վրայ մտածի։ Մէկ վեր էր թռչում, գժի նման ինչ որ մի բան էր փնտռում բոլոր անկիւններում, մէկ էլ վերարկուն վերցնում գցում էր վրան, կարծես ուզում էր կնոջ յետևից ընկնել ու բռնել, բայց մի քիչ մտածելուց յետոյ կարծես հասկանում էր, թէ ինչ անմիտ բան էր մտադրւում անել, և քարացածի նման կանգնած մնում էր տեղումը, սաստիկ գունատուած դէմքով, զարհուրելի կրակով փայլող աչքերով և կատաղութեամբ լի սրտով։ Ամիրանովը աշխատում էր սառնասրտութեամբ քննել իւր դրութիւնը, բայց այդ նրան չէր յաջողում։ Երկար ժամանակ մնաց նա այդ դրութեան մէջ. վերջապէս, մի շարագուշակ հայեացք գցելով կնոջ նամակի վրայ, յուզմունքից խեղդուող ձայնով արտասանեց՝

—Այդպէս էլի՛, թողեցիր ինձ գնացիր... Ո՛չ, տիկին, ներեցէք, ես կը ստիպեմ ձեզ վերադառնալ։

Կատաղութիւնից քիչ էր մնում սիրտը պատռէր։

Կէս գիշերից շատ անց էր, բայց Ամիրանովը էլի նստած էր և սկի մտքովն էլ չէր անցնում, թէ պէտք է քնել։ Նա բոլորովին թուլացել էր հոգեկան կուից և սկսեց ակամայ անձնատուր լինել մեղմ զգացմունքներին։ Վերջապէս, երբ որ արեգակի առաջին ճառագայթները թափանցեցին նորա սենեակը, նա անգիտակցաբար դուրս նայեց պատուհանից ու ասաց,—այժմ նրանք այստեղից բաւական հեռու կը լինին։

Ցանկարծ Ամիրանովի մտքովն անցկացաւ, որ, գուցէ, կինը իսկապէս ընդ միշտ է հեռացել իրանից...

Նա չէր կարողանում առանց սարսափելու երևակայել այդ... Նրան յանկարծ թւեց, թէ ինչ որ մի բան այրւեց նորա ներսը, և նա ջղաձգաբար բռնեց կուրծքը։

Ախ, կնիկ, կնիկ, այս ինչ բերեցիր իմ գլխին. կաց, ես քեզ ցոյց կը տամ,—նորից կատաղելով շշնջաց նա կապուտած շրթունքներով։

Այսպիսի ծանր մտածմունքների մէջ անցկացրեց Ամիրանովը ամբողջ գիշերը մինչև լոյս։

Հետևեալ օրը նա տանից դուրս չ'եկաւ ու առաւօտեանից մինչև երեկոյ նա նստած իւր սենեակում մտածում էր, թէ ինչ անի, ինչպէս դուրս գայ իւր դրութիւնից։

Հացը գցեցին, բայց նա չը կարողացաւ ոչինչ բերանը դնել։ Հեղինէն ու Թամարը սկի մոքիցը չէին հեռանում և սաստիկ կատաղութեամբ լցնում էին նորա սիրտը։ Նա երդուեց, որ անպատճառ կը ստիպի նրանց վերադառնալ իւր մօտ։

Մի քանի օրից յետոյ, երբ որ առաջին օրւայ բուռն զգացմունքը մեղմացաւ և նա սկսեց աւելի սառնասրտութեամբ դատել, նա ինքն իրան ասաց.

Ոչ, այժմ այդ անկարելի է. պէտք է սպասել, թող նա մի քիչ հանգստանայ, վերջը, ինքս ինձ նորա առաջ արդարացնելուց յետոյ, աւելի համարձակ կը սկսեմ գործել և այնպէս կ'անեմ, որ խելքը գլուխը հաւաքի։ Ախ, անիծեալ կտակ, ինչքան դարդուբալա բերեց գլխիս։

Թամարը Հեղինէին ամէն բան յայտնած կը լինի... Շատ վատ բան դուրս եկաւ... այսպէս թէ այնպէս շատ ժամանակ ու շատ աշխատանք է գործ դրած այդ ժառանգութիւնը ձեռք գցելու համար, հեշտ ու հանգիստ ձեռքից բաց թողնել յիմարութիւն կը լինի. պէտք է աշխատել մի կերպ որ գոնէ մի մասը մնայ ինձ։ Այդ թարս Պետրոսեանցն էլ ո՞րտեղից դուրս եկաւ. ինձ համար էր հէնց աշխարհ եկել՝ ինչ է. սկի խօսք չի ուզում հասկանալ։ Համա ով գիտէ, տեսնենք...

Ամիրանովը մոքի հետ ընկաւ ու սկսեց հնարքներ փնտռել գործը յաջող կերպով տանելու համար, բայց ոչինչ դուրս չ'եկաւ, — ուշ ու միտքը Հեղինէի հետ էր...

Ուրեմն առաջ կը վերջացնեմ այդ կտակի գործը ու յետոյ կը սկսեմ միջոցներ փնտռել կնոջս հետ հաշտուելու համար, մտքեց նա։ Ինչ լինի չը լինի՝ ես իմ որդուցս ձեռք չեմ քաշիլ, Հեղինէն էլ չի ուզիլ բաժանուել նրանից. լա՛ւ, բայց մինչև այն ժամանակը պէտք է մի հնարք գտնել, որ այս բանը խալխի բերանը չ'ընկնի, թէ չէ էլ չեմ կարող ծանօթներիս երեսին նայել։ Լաւ է, որ այս երեք օրը հիւանդ ձևանալով տանիցը դուրս չէի գալիս, հօ մինչև վերջը չեմ կարող այդպէս անել. այ, վաղը պէտք է գնամ ծառայութեան։

Ամենքին կ'ասեմ, թէ կինս գնացել է բժշկելու։ Ը՛, յիմար, որ ես եմ հա՛. մէկը հարցնող լինի թէ ով է Նոյեմբեր ամսին հանքային ջրերը գնում բժշկելու։ Տէր Աստուած, ինչ անեմ, ո՞ր քարոտն ընկնեմ։ Ախ, ինչ անողորմ կերպով վարուեց նա ինձ հետ։ Կարող էի սկի մտքովս էլ է անցկացնել, թէ կինարմատի ձեռքից այսքան բան կը քաշեմ ես,—սաստիկ վրդովուած խօսում էր ինքն իրան հետ Ամիրանովը։

Չէ, ես ինձ խալխի ծիծաղատեղ չեմ դարձնիլ,—աղաղակեց նա բարկութիւնից կա-կարմիր կորած և բուունցքով կատաղաբար խփեց սեղանին։

Վճռեցի. ամենքին կ'ասեմ, թէ իշխանուհի Նակունին յանկարծ հիւանդացել է և հեռագրով կանչել է կնոջս։ Բան է՝ եթէ մինչև ամառ չը կարողացայ յետ բերել նրան, գժւար չի հաւատացնել, որ մնացել է այնտեղ հանքային ջրերում լողանալու համար, իսկ մինչև աշունք դեռ շատ ժամանակ կայ, շատ բան կարող է փոխուել։

Դեռ երկար ժամանակ Ամիրանովը անշարժ կանգնած էր մի տեղում՝ խորասուզուած մտածմունքների մէջ։

XXII

Հեղինէն ամբողջ ճանապարհին լուռ էր ու շարունակ վախենալով շորս կողմն էր նայում, կարծես վախենում էր թէ յետևից ընկած կը լինեն։ Ամեն անգամ զանգակի զնգոց կամ ձիու ոտնաձայն լսելիս՝ նա ամբողջ մարմնով դողում էր ու երեխային պինդ սեղմում էր կրծքին։

Նրա հետ տանջւում էին նոյնպէս և Աստնին, Թամարն ու հաւատարիմ դայեակը։ Շատ էր ուզում Աստնին մի կերպ փարատել Հեղինէի տխրութիւնը, բայց զգում էր որ այդ անկարելի է։

Վերջապէս նրանք հասան Վլադիկաւկազ։ Աստնին խնդրեց իւր ծանօթներից մէկին, որ Պեատիգորսկ էր գնում, տեղ հասցնել Ամիրանովներին։ Հեղինէն երախտագիտութեամբ սեղմեց նրա ձեռքը և ասաց՝

—Բաւական չէ՞, որ դուք այսքան նեղութիւն կրեցեք իմ պատճառով. ինչու էք ուրիշներին էլ նեղութիւն տալիս։

—Ինչեր էք ասում, տիկին Հեղինէ, այս ինչ նեղութիւն է. վերջապէս ինչ կը լինի, որ մի քիչ էլ նեղութիւն. ես պատրաստ եմ ձեռքիցս եկած ամէն բան անել ձեր հանգստութեան համար,— զգացուած ասաց Ասունին։

Հեղինէն երախտագիտութեամբ ուղղեց նրա վրայ իւր վշտահար հայեացքը։

—Հապա Թամարը ո՞րտեղ է։

—Նա այստեղ մի ազգական կին ունի, առաւօտանից գնացել է նրա մօտ։

—Հա, գիտեմ. ամառը Պետերբուրգ գնալիս մենք նրա մօտ իջանք, մի քանի օր մնացինք,—մոքամոլոր կերպով ասաց Հեղինէն ու դուրս եկաւ սեղանատնից մենակ թողնելով Ասունուն։

Ասունին կէս ժամի չափ կանգնած մնաց՝ մէջքը տուած վառարանին։

—Ալէքսանդր Վասիլիչ, սթափեցրեց նրան Թամարի ձայնը։

—Ախ, գո՞ւք էք. ի՞նչ կը հրամայէք։

—Ես ուզում եմ այստեղ մնալ։ Կարծեմ այն բոլորը լսելուց յետոյ, որ ես ձեզ պատմեցի, դուք էլ ինձ խորհուրդ կը տաք մնալ։ Ես այստեղ կը կենամ մօրաքրոջս մօտ, որ վաղուց ինձ հրաւիրում էր իւր մօտ։ Որ ամբողջ աշխարհքը տային ինձ, ես չէի բաժանուիլ Հեղինէից, եթէ հաւատացած չը լինէի, որ իմ ներկայութիւնը միշտ անախորժ յիշողութիւններ պէտք է զարթեցնի նրա մէջ։

Ասունին ասաց որ իւր կարծիքով էլ լաւ կը լինի, որ նա մնայ Վլադիկաւկազում։

—Խնդրում եմ, Ալէքսանդր Վասիլիչ, մի կերպ յայտնեցէք իմ մտադրութիւնը հարսիս. այնպէս արէք, որ սրտին չը կպչի։

—Ապահով եղէք, օրիորդ, ես նրան կ՝ասեմ։

Հեղինէն շատ հանգիստ կերպով լսեց այդ լուրը։ Այդ ժամանակ նրա վրայ այնպիսի տրամադրութիւն էր եկել, որի ժամանակ մարդս մի տեսակ յոգնած սրտով խաչում է ձեռները և անձնատուր է լինում հանգամանքների բերմունքին։

Երեկոյեան ժամի իններին մօտ կը լինէր երբ Հեղինէն հասաւ Պետերբուրգ։ Միայն այդ ժամանակ նա սթափուեց ինքնամոռացութիւնից ու հաւատաց, որ վերջին օրեան դէպքերը և իւր համարձակ վարմունքը երազ չէին, այլ իրականութիւն։

Նա իշաւ Ասունու ասած հիւրանոցում և երկար անքնութիւնից յետոյ քնեց մինչև առաւօտեան ժամի տասը։

Քունը բաւական կազդուրեց նրան։

Ժամի վեցին ծառան յայտնեց Հեղինէին, որ մի ինչ-որ կին ուզում է նրան տեսնել։ Ասունու աղգականն էր—տիկին Աստուածատրեան։ Նախընթաց օրը Ասունուց նամակ էր ստացել, որով նա խնդրում էր ընդունել իւր տանը Հեղինէին և ամեն կերպ օգնել նրան։

Աղքատ, բայց հիւրասէր Աստուածատրեանը այնքան թախանձագին խնդրում էր Հեղինէին տեղափոխուել իւր տունը, որ նա չը կարողացաւ հակառակել և համաձայնեց։

—Քրոջս տղային իմ հարազատ որդու պէս եմ սիրում. մենք այնքան լաւութիւն ենք տեսել նրանից, որ ես ինձ սատիկ անպատուած կը համարեմ, եթէ որ դուք չը համաձայնէք մեր տանը կենալ,—խնդրում, համոզում էր նրան տիկին Աստուածատրեանը։

Իսկ երեխերքս որքան կ'ուրախանան, մանաւանդ մեծ աղջիկներս։ Նրանք արդէն հասել են, Աստուծով շուտով կը պսակեմ։

Աստուածատրեանի տանը տիրող խաղաղ նահապետական կեանքը ու շրջապատողների քաղցր վերաբերութիւնը բարերար ներգործութիւն ունեցան Հեղինէի յուզուած հոգու վրայ։

Այժմ միայն, երբ մի քիչ հանգստացել էր հոգով, նա սկսեց մտածել իւր վրայ և զգաց իւր նոր դրութեան անյարմարութիւնները։ Տանից ամենևին չէր դուրս գալիս և ամեն կերպ աշխատում էր, որ չը բացուի իւր գաղտնիքը։ Շատ էր ուզում գնալ քեռուց մօտ, բայց չէր գնում, որովհետև ինքը Շակունին Պետերբուրգում չէր, գնացել էր Պետերբուրգ իւր հիւանդացած որդիներին տեսութեան։

Հեղինէն անհամբեր սրտով Ամիրանովից նամակի էր սպասում, յուսալով, որ նրա նամակը կ'ազատի իրան անտանելի անորոշ դրութիւնից։

Մի շաբաթ անցած վերջապէս նամակ եկաւ Ամիրանովից։ Մարդը պատուիրում էր Հեղինէին անպատճառ տեղափոխուել իշխանուհի Շակունու մօտ, պահանջում էր, որ նա գաղտնի պահի իրանց մէջ ծագած գժտութիւնը, սպառնալով, հակառակ դէպքում, խիստ միջոցների դիմել։

«Ինչ պատրաստով կ'ուզես ապրիր Պետերբուրգում, միայն թէ, խնդրեմ, ինձ էլ հաղորդիր, որ ես ուրիշ բան չ'ասեմ Ծանօթներիս։ Առանձին ապրելու համար վկայութիւնդ ինձնից ստանալու յոյս չ'ունենաս,—գրում էր Ամիրանովը նամակի վերջում։

Այդ տողերը կարդալուց յետոյ Հեղինէն գորովալից հայեացք գցեց երեխայի վրայ և վճռեց առժամանակ համաձայնել մարդու առաջարկած պայմաններին ու սպասել, թէ ինչ կը լինի յետոյ։ Նա շատ էր մտածում, թէ ինչպէս քեռակնոջ առաջ արդարացնէր իրան, որ այնքան ժամանակ Պետերբուրգումն էր ու չէր գնացել նրան տեսութեան, և, որ գլխաւորն է, թէ ինչպէս բացատրէր իւր գալու նպատակը, որ նա հաւատար իւր ուած բացատրութեանը։ Վերջապէս կարմրելով ու անվճռական կերպով նա յայտնեց քեռակնոջը, թէ մարդը պաշտօնով փոխուում է Ստաւրոպոլի նահանգը։

—Ինչպէս է եղել, որ մենք այդ չենք իմացել,—զարմանալով ասաց իշխանուհին։

Միխայիլ Պետրովիչը միշտ այդպէս է, նախատես և զգոյշ։ Երևի տեսել է որ լաւ օրեր են անում, մտածել է, որ յետոյ գուցէ էլ այդպէս լաւ եղանակ չը լինի, ձեզ առաջ է ուղարկել։ Այ, ինչ եմ ասել. տղամարդը այդպէս պէտք է լինի։

Մի թեթև և տարօրինակ ժպիտ խաղաց Հեղինէի երեսին։

Տէր Աստուած, երբ պէտք է վերջապէս ազատուեմ այս ատանելի դրութիւնից,—զայրացած մտածեց նա ու համարեա վազելով դուրս եկաւ պատշգամբը մաքուր օդ ծծելու։

Չէ, այսպէս շարունակել չի կարելի, պէտք է միանգամից վերջացնել,—համարեա բարձրաձայն արտասանեց նա ու մի քիչ յետոյ վճռեց նամակ գրել մարդուն։

Զը նայելով, որ Ամիրանովը շատ աշխատեց ծածկել իւր և կնոջ մէջ պատահած գժտութիւնը, բայց այդ չը յաջողեց նրան։ Հասարակութիւնը վաղուց նկատել էր նրանց ընտանիքում տիրող երկպառակութիւնը և այդ պատճառով Հեղինէի գնալու լուրը կայծակի արագութեամբ տարածուեց քաղաքի մէջ։ Սկզբում, ինչպէս միշտ լինում է, խօսում էին դահլիճների անկիւններում, իսկ յետոյ Թ-սի ամեն մի ծակուծուկում։ Մի խօսքով ամբողջ քաղաքը այդ սկանդալովն էր զբաղուած։ Աւելորդ է ասել, որ էլ բամբասանք չը մնաց,

որ չ՝անէին Հեղինէի մասին, այդ, իրանց կարծիքով, դուրս ընկած կնոջ մասին։ Հասկանալի է նոյնպէս, որ Ամիրանովը զայրոյթիցը կատաղում էր տեսնելով, որ էլ անկարելի է թաքցնել եղածը, և ամբիթին ուզում էր գետինը մտնել, երբ որ իւր թշնամիների դէմքերի վրայ կարդում էր ծաղրի և չարախնդացութեան արտայայտութիւն։ Ամիրանովի բարեկամները ասում էին, թէ Հեղինէն գնացել է Պետերբուրգ իշխանուհի Շակունու հիւանդութեան պատճառով, բայց նրանց, ի հարկէ, շատ քչերն էին հաւատում։

Եփեմիան, որ մի շաբաթ կը լինէր ինչ տեղափոխուել էր եղբօր մօտ, ամեն միջոց գործ էր դնում նրա սիրտը հանգստացնելու համար։

Եկան Մենդի տօները։ Ուբարովի կտակի գործը շուտով պէտք է վերջանար։ Պետրոսեանցը վճռել էր չը խնայել Ամիրանովին, որի դէմ նա շատ կարևոր և հաստատ փաստեր էր ձեռք բերել։ Ամիրանովը այդ գիտէր ու վախենում էր և այդ պատճառով չը համարձակուեց վէճ բարձրացնել դատարանի առաջ ժառանգութեան մասին։ Շատ ծանր էր, ի հարկէ, նրա համար ձեռք քաշել ժառանգութիւնից, բայց այդ ժամանակ նա այնքան զբաղուած էր իւր ընտանեկան հարցով և այնքան սաստիկ ցանկանում էր հաշուել իւր կնոջ հետ, որ պատրաստ էր ընդունել ամեն տեսակ զոհաբերութիւն՝ կնոջ աչքումը իրան արդարացնելու համար։ Կնոջը երկար ու ձիգ նամակներ էր գրում լի զղջումով ու քնքշութեամբ։

Մի օր նա նստած լաւ սովորութեան մտածում էր իւր գրութեան մասին։ Դէմքը արտայայտում էր խորին մտահոգութիւն։ Դառան ներս եկաւ ձեռին մի նամակ։ Հեղինէիցն էր։ Նա ուշի ուշով կարդաց հետևեալ տողերը՝

«Ձեր պահանջի համաձայն ապրում եմ քեռակնոջս մօտ։ Նրանց խաբում եմ։ Այդ ակամայ խաբէութիւնը ինձ սաստիկ տանջում է։ Էլ դիմանալ չեմ կարող։ Վերջապէս ինչ միտք ունի ծածկել եղածը, քանի որ ես ընդ միշտ կորել եմ ամեն կապ անցեալիս հետ։ Դուք, ի հարկէ, կը սպասնաք ինձ, որ կը դիմէք դատարանին, օրէնքին, կը խլէք ինձնից երեխային, բայց ձեզ հաւատացնում եմ, որ զուր կը լինի այդ։ Իմ վճիռս անդրդուելի է։ Նախ քան ձեզ յիշեցնելը, որ դուք ձեզ ազատ համարէք ամեն տեսակ պարտակութիւնից դէպի

ինձ, ես խնդրում, աղաչում եմ ձեզ միայն մի շնորհք, մի անփոխարինելի շնորհք անել ինձ—թողնել ինձ մօտ մեր երեխային։ Դուք պէտք է համաձայնէք այդպէս անել հէնց երեխայի օգուտի համար. ոչ ոք, մինչև անգամ հայրն էլ, չի կարող այնպէս պահել պահպանել մի երեխայի ինչպէս մայրը։ Իսկ եթէ դուք այնքան քարասիրտ կը լինէք, որ չէք լսել իմ աղաչանքին ու կ'աշխատէք զրկել ինձ իմ մենակ մխիթարութիւնից, ես կը կու�մ ձեր դէմ մինչև արիւնիս վերջին կաթիլը և հաւատացած եղէք, որ դուք չէք հասնել ձեր նպատակին։

Հ.

8. Գ..վերևի կոմմոդի աչքումը դուք կը գտնէք այն բոլոր ոսկեղէնն ու ակնեղէնը, որ դուք ինձ ընծայել էք։ Ես հետս վերցրեցի հինգ հարիւր ռուբլի, որ մնացել էր այն հազար ռուբլուց, որ դուք ինձ տուել էիք ծախսելու իմ օժտիցս։ Ես գիտեմ, որ մնացած վեց հազարը մենք վաղուց ծախսել ենք։

Նամակը որ կարդաց՝ Ամիրանովը յուսահատ քաշ գցեց գլուխը և մօտ կէս ժամ մնաց այդ դրութեան մէջ։ Այդ ժամանակ միայն նա զգաց, թէ որքան մեղաւոր էր ինքը կնոջ առաջ և թէ որքան արդար էր կինը, և խիղճը սկսեց սաստիկ տանջել նրան, բայց այնուամենայնիւ նա էլի մոքումը հայհոյում էր Հեղինէին, զարմանում էր Թամարի յանդգնութեան վրայ, անիծում էր Սահաւունուն, թէև ներքին մի ձայն նրան ասում էր, որ մեղաւորը Սահառունին չէր։ Սիրտը քիչ էր մնում պատռուէր սաստիկ յուզմունքից։ Նա խեղդուում էր, շունչը կտրուում էր. զզջումն էր պատճառը թէ զայրոյթը—դժուար էր որոշել։ Նա տժգոհ էր թէ իրանից թէ ամբողջ աշխարհքից։

Սաստիկ յոգնած ու տանջուած՝ նա բաց արեց պատուհանը և սկսեց ագահութեամբ ծծել ցուրտ օդը։

Մի քանի օրից յետոյ Ամիրանովը նորից նամակ գրեց կնոջը։ Այդ նամակի պատասխանին նա սպասում էր անհամբեր սրտով։ Նա դեռ յոյս ունէր, թէև թոյլ յոյս, որ կինը դեռ կարող է հաշտուել իւր հետ։ Պատասխանը ստացուեց երկու—երեք շաբաթից յետոյ և վերջնականապէս համոզեց նրան, որ իւր յոյսը զուր է։

Ամիրանովի տխրութիւնը աւելի սաստկացաւ։ Կնոջ ու երեխայի կարօտը սաստիկ տանջում էր նրան։ Եփեմիան աշխատում էր համոզել եղբօրը, որ Հեղինէն անպատճառ կը վերադառնայ, եթէ միայն նա (եղբայրը) լսի իւր խորհուրդին և խիստ միջոցների դիմի, բայց Ամիրանովը չէր լսում նրան և իւր սրտի դառնութիւնը նրա գլխին էր թափում։

Ամիրանովը շատ լաւ գիտէր, որ բռնի միջոցները իրան հասարակութեան ծիծաղատեղ կը դարձնեն և ոչ միայն նպատակին չեն հասցնիլ, այլ և կը գրգռեն Հեղինէին իւր դէմ։

(Կը շարունակուի)